Մ. Ա. ԲԱՐՍԵՂՈՎԻ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ*

Վրեժ Հարությունյան

Սպիտակֆիններ դեմ կռիվներում իրենց հերոսությունը, վարպետությունը և խիզախությունը ցուցաբերեցին սովետական շատ մարտիկներ, այդ թվում և գեներալ Բարսեղովի հրետանավորները...

Հրետանու գեներալ-գնդապետ Ն. Մ. Խլեբնիկով

Բանալի բառեր՝ *Մ. Ա. Բարսեղով, Արցախ, հրետանի, սպիտակֆիններ, 7-րդ բանակ, պատերազմ, Մաններհեյմ, գեներալ-լեյտենանտ, ԽՍՀՄ հերոս:*

Միքայել Արտեմի Բարսեղովը ծնվել է 1899 թ. հունիսի 15 - ին Արցախի Մարտունու շրջանի Մաշադիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն) գյուղում[1]: Միքայելի հայրը՝ Արտեմը, բրուտագործ վարպետ էր և ուներ սեփական արհեստանոց, իսկ մայրը տնային տնտեսուհի էր: Մ. Բարսեղովը սովորել է հարազատ գյուղի տարրական դպրոցում[2]: Սակայն 12 տարեկան հասակում, սոցիալական վատ վիճակից ելնելով, ստիպված էր հեռանալ հարազատ ընտանիքից և հայրենի գյուղից՝ աշխատանք փնտրելու նպատակով: Նա բնակվում է Միջին Ասիայում՝ Անդիջան քաղաքում:

Ընթացող աշխարհամարտը չէր կարող անտարբեր թողնել պատանի Բարսեղովին: Եվ նա երեսուն հայ կամավորների հետ մեկնում է ռազմաճակատ ու մասնակցում առաջին համաշխարհային պատերազմին: Նա Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին մասնակցել է 1916 թ. կեսերից մինչև 1917 թ. նոյեմբերը[3]. կռվել է 39-րդ հրետանային բրիգադի 2-րդ առանձին Կովկասյան կորպուսի շարքերում որպես մարտկոցի հրամանատար[4]: Սակայն Կարսի մոտ Միքայել Բարսեղովը ծանր վիրավորվում է և զորացրվում բանակից:

Բանակից զորացրվելուց հետո Բարսեղովը կրկին հաստատվում է Անդիջանում, սկսում աշխատել բամբակազտիչ գործարանում: 1918 թ. Բարսեղովը կամավոր գենք է վերցնում, անդամակցում կարմիր բանակին ու մասնակցում Միջին Ասիայում բասմաչների դեմ պայքարին[5]: Հենց այստեղից է հիմնականում սկսվել Միքայել Բարսեղովի՝ Խորհրդային սոցիալիստական պետության պաշտպանությանն ուղղված մարտական գործունեությունը: Քաղաքացիական պատերազմի տարիներին նա մասնակցել է Անդիջանի ամրոցի, Կոկանդի, Նամագանի, Ֆերգանայի(Սկոբոլեի) մարտական գործողություններին[6], որտեղ փայլուն են դրսևորվել Բարսեղովի ռազմական տաղանդն ու կազմակերպչական ունակությունները: Բարսեղովը նշանակվում է մարտկոցի հրետանային դասակի հրամանատար: Ապրիլին նրա մարտկոցը մտնում է հայ ժողովրդի մեկ այլ լեգենդար զավակ Հայկ Բժշկյանցի կարմիր գվարդիայի Սամարղանդյան միացյալ ջոկատի կազմը[7]: Շուտով նրանք գրոհում են Բուխարայի էմիր Սեիդ Ալիմի դիրքերի վրա: Էմիրը դիմում է փախուստի: Կռիվներից մեկի ժամանակ Բարսեղովը վիրավորվում է: Ապաքինվելուց հետո նշանակվում է մարտկոցի հրամանատար արցախցի Հակոբ Մելքումովի բրիգադում: Ի դեպ, հենց Հակոբ Մելքումովի հրամանով Բարսեղովը ընդունվում է Տաշքենդի հրետանային ուսումնարանը: Այստեղ նա սովորում է 1920-1922 թթ. [8]:

1923-1925 թթ. Միքայել Բարսեղովը ծառայել է Պետրոգրադի զինվորական օկրուգի ստորաբաժանումներում, իսկ 1926 թ. տեղափոխվել է միջինասիական զինվորական օկրուգ և ծառայության անցել Գարջունում տեղակայված զորամասում որպես ու-

* Հոդվածն ընդունվել է 09.10.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը: 22.10.19:

սումնական մարտկոցի հրամանատար [9]: 1928-30 թթ. նույն զորամասում եղել է դիվիզիոնի, իսկ մի քանի ամիս՝ ուսումնական դիվիզիոնի հրամանատար:

Խորհրդային հրամանատարությունը, գնահատելով Բարսեղովի ռազմական տաղանդը, զինվորական հմտություններն ու փորձը, 1930 թ. օգոստոսին նրան նշանակում է մերձվոլգյան զինվորական օկրուգի առանձին հրետանային դիվիզիոնի հրամանատար: Իսկ 1931 թ. Բարսեղովը ղեկավարում էր ուրալյան 57-րդ հրետանային գունդը: Այստեղից էլ սկսվում է Բարսեղովի կյանքի զինվորական վերելքը:

Գնդի հրամանատարի պաշտոնում նշանակվելուց հետո Բարսեղովին անհրաժեշտ էր կատարելագործել ռազմական գիտելիքները, ստանալ բարձրագույն սպայական ակադեմիական կրթություն: Խորհրդային բանակին նույնպես անհրաժեշտ էին բարձրագույն կրթությամբ պատրաստի կադրեր, մանավանդ Բարսեղովի նման կադրեր, ովքեր անցել էին մարտական փայլուն ճանապարհ և կարող էին իրենց ավանդը բերել բանակի կայացման ու հզորացման գործում: Եվ ահա 1932 թ. Բ. Մ. Շապոշնիկովի երաշխավորությամբ Մ. Բարսեղովը մեկնում է Մոսկվա՝ ուսանելու Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Ակադեմիայում Մ. Բարսեղովը ձեռք է բերում տեսական խոր գիտելիքներ, ավելի խորը ուսումնասիրում ռազմական գործը: Նա դառնում է լավ պատրաստված հրետանավոր ու 1933 թ. պետության կողմից պարգևատրվում «Կարմիր դրոշ» շքանշանով[10]:

Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան Մ. Բարսեղովը ավարտում է 1936 թ. ոսկե մեդալով[11]: Նույն՝ 1936 թ. մայիսին Բարսեղովին նշանակում են լենինգրադյան ռազմական օկրուգի 69-րդ կորպուսի հրետանային գնդի հրամանատար, իսկ 1937 թ. օգոստոսին՝ Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետ[12]: 1938 թ. փետրվարից նշանակվում է բրիգադի հրամանատար, իսկ 1939 թ. նոյեմբերի 5-ից՝ դիվիզիայի հրամանատար Լենինգրադի զինվորական օկրուգում: Մեծ են նրա ծառայությունները Լենինգրադի ռազմական օկրուգի հրետանային զորամասերի ստեղծման, ամրապնդման, հրամկազմի պատրաստման գործում:

1939 թ. աշնանը միջազգային իրավիճակը սկսում է սրվել. Ֆինլանդիայում սկսվում է համընդհանուր զորահավաք: Ֆինական զորքերը տեղաբաշխվում են Կարելական պարանոցում ու խորհրդային սահմանին մերձակա այլ շրջաններում՝ Լադոգա լճից մինչև Ֆինական ծոց: Սեպտեմբերի կեսերին Լենինգրադյան զինվորական օկրուգի զորքերը կենտրոնացվեցին ֆինական սահմանին[13] և բերվեցին մարտական պատրաստականության: Հրետանու մոբիլիզացումը իրականացվեց օկրուգի հրետանու պետ Մ. Բարսեղովի անմիջական ղեկավարությամբ:

Ռազմական գործողությունները Կարելական պարանոցում սկսվեցին 1939 թ. նոյեմբերի 30-ին: Ֆինական բանակի դեմ Լենինգրադյան ռազմական օկրուգն ուներ հրաձգային դիվիզիաների, հրետանու և հատուկ զորքերի որոշակի քանակ: Հիմնական ուժերը կենտրոնացվեցին 7-րդ բանակի տեղամասում. հրետանու պետ նշանակվեց Մ. Բարսեղովը:

Խորհրդային զորքերին և հրետանուն վիճակված էր մարտական գործողությունները վարել ծանր պայմաններում: Մարտական գործողությունների թատերաբեմը ծածկված էր անտառներով, առատ տեղացած ձյունով, ամենուր լճեր ու ճահիճներ էին, որոնցից շատերը չեն սառել նույնիսկ ծմռանը. ճանապարհներ շատ քիչ կային: Այդտեղ տեղակայված էին 2000-ից ավելի կրակակետեր, որոնք իրար հետ կապված էին խրամատներով ու խրամուղիներով[14]: Այս ամենը հարձակման ժամանակ բարդացնում էր խորհրդային զորքերի և հրետանու գործողությունները ու հեշտացնում էր ֆինների պաշտպանությունը, առանձնապես նրանց ամրացված դիրքերի շրջաններում:

7-րդ բանակի ռազմական գործողությունները ծավալվեցին շուրջ 100 կմ երկարություն ունեցող ճակատում, իսկ 1500 կմ-ից ավելի երկարությամբ մնացած ճակա-

տում տեղակայված էին այլ զորքեր: Դաժան մարտերում 7-րդ բանակի զորքերը հաղթահարեցին հակառակորդի համառ դիմադրությունը, տիրեցին արգելափակված գոտուն և դեկտեմբերի 12-ին ողջ ռազմաճակատի երկայնքով՝ Ֆիննական ծոցից մինչև Լադոգա լիճ, հասան Մաններհեյմի պաշտպանության գծի գլխավոր շերտին[15]:

Զորքի և հրետանու կարճ նախապատրաստությունից և մասնակի վերախմբավորումից հետո՝ 1939 թ. դեկտեմբերի 17-ին, սկսվեց Մաններհեյմի գծի գրոհը: Սակայն գրոհը թույլ էր նախապատրաստված. ուժերը և միջոցները ակնհայտորեն անբավարար էին թշնամու ամրացված շրջանները ճեղքելու համար: Չնայած խորհրդային ուժերը հաջողության չհասան, բայց ցույց տվեցին արիության ու խիզախության բազում օրինակներ: Գրոհներից մեկի ժամանակ՝ Լիպոլո գյուղի մոտ, Բարսեղովը հրամայում է ուղղակի նշանառությամբ կրակ բացել 150,8 բարձունքի վրա, որի մոտ հետևակը կանգ էր առել: Անմիջապես դստը ոչնչացվում է[16]: Կոմդիվ Բարսեղովը բարձրանում է նոր գրավված դիրքը ու առաջ շարժվելու հրաման տալիս: Դեպի առաջ ճանապարհը բաց էր, սակայն այդ ճանապարհը անցնում էր ճահիճների միջով, ինչը դժվարացնում էր հրետանու տեղաշարժը: Այստեղ փայլատակում է Բարսեղովի զորավարական տաղանդը. նա հայտնվում էր զինվորների կողքին, օգնում նրանց՝ հրելու ցեխում մնացած տեխնիկան, ոգևորում նրանց, ուժ տալիս: Երբ զինվորները լսում էին, որ անմիջապես իրենց կողքին է կոմդիվ Բարսեղովը, ավելի էին ոգևորվում ու բերնեբերան փոխանցելով «կոմդիվ Բարսեղովն այստեղ է, արծիվ է, արծիվ, նրա հետ ուր ասես կանցնես» խոսքերը՝ շարժվում էին առաջ՝ հաղթահարելով անասելի թվացող արգելքները[17]: Մեկ այլ՝ Տրոնսունդի ուղղությամբ ֆիններն դիմադրության և մառախլապատ եղանակի պատճառով հետևակը չէր կարողանում առաջանալ, իսկ հրետանին գետը չէր անցնում՝ վախենալով սառույցի ջարդվելուց: Այստեղ է գալիս Բարսեղովը, իր ձեռքն է վերցնում հրետանու գործողությունների ղեկավարումը, կազմակերպում ապահով գետանցումը սառույցի վրայով, կրակ բացում թշնամու ուղղությամբ: Նրա համառության, հաստատակամության շնորհիվ խնդիրը լուծվեց և հետևակը անցավ հարձակման[18]:

Այսպիսի բազմաթիվ օրինակները վկայում են Բարսեղովի մեծության, ճիշտ պահին վճռական որոշումներ կայացնելու և իր անմիջական մասնակցությամբ դրանք իրականություն դարձնելու մասին: Նա այն հրամանատարներից էր, որոնք կռվի դաշտում միշտ գտնվում էին զինվորների կողքին ու դրա համար էլ վայելում էին նրանց սերն ու հարգանքը:

1939 թ. վերջին Կարմիր բանակի գլխավոր ռազմական խորհուրդը որոշում ընդունեց ժամանակավոր դադարեցնել հարձակումը և հանգամանորեն նախապատրաստվել Մաններհեյմի գծի ճեղքմանը:

Հրամանատարության անցկացրած միջոցառումների շնորհիվ դեկտեմբերի վերջին նշանակալի ավելացավ հրածգային դիվիզիաների, հատկապես ծանր հրետանու և ավիացիայի քանակը: 1940 թ. հունվարի 7-ին Կարելական պարանոցում ստեղծվեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատը, որի կազմի մեջ մտան 7-րդ և 13-րդ բանակները: Գլխավոր՝ Վիբորգի ուղղության ճեղքումը հանձնարարվեց 7-րդ բանակին, որի հրամանատար նշանակվեց Կ. Ա. Մերեցկովը, հրետանու պետ դարձավ Մ. Բարսեղովը: Ի դեպ, այս ուղղությունը ամենադժվարն էր, որովհետև թշնամին այստեղ ուներ առավել ապահովված պաշտպանական համակարգ[19]:

Գլխավոր ուղղությամբ հրետանու կառավարումը կենտրոնացվեց: Հրետանու մասերի նախապատրաստության ողջ աշխատանքն անց էր կացվում 7-րդ բանակի հրետանու շտաբի կողմից՝ Լ. Ա. Գովորովի գլխավորությամբ, բանակի հրետանու պետ Մ. Բարսեղովի անմիջական ղեկավարությամբ: Ռազմաճակատի գծի յուրաքանչյուր կիլոմետրի վրա կենտրոնացվեց միջին թվով 50 թնդանոթ. սպառազինություն մտցվեցին նոր տեսակի ականանետներ հաղթահարելով որոշ մարդկանց քարացած գաղափարախոսությունը[20]: Սկսվեց նոր գրոհ, սակայն ապարդյուն: Ֆիննական պաշտպանա-

կան գիծն անմատչելի էր. «հարվածում ենք նրանց, հարվածում, բայց ոչ մի կերպ ականները չեն ծակում նրանց դօտերը», - զեկուցում է Բարսեղովը[21]:

Սկսվեց զորքերի տքնաջան պատրաստությունը Մաններհեյմի գծի ճեղքման համար: Հատուկ տեղ էր հատկացվում հրետանու պատրաստվածությանը: Կազմակերպվեցին հակառակորդի ամուր ռազմական կառույցների լրացուցիչ հետախուզություն, ռազմական օբյեկտների նպատակային ուսումնասիրում և վերլուծություն: Պարզվեց, որ հակառակորդի պաշտպանական կառույցները պատրաստված են «600» մակնիշի ցեմենտով, որի համար էլ թեթև հրետանին չէր ծակում բետոնը: Այդ պատճառով հակառակորդի յուրաքանչյուր ռազմական օբյեկտի վերացման համար ամրակցվեցին ծանր հրետանու հրանոթ ու մարտկոց, որոնք ընդունակ էին իրականացնելու մարտական առաջադրանք:

Բացի այդ՝ ռազմաճակատի ռազմական խորհրդի, քաղմարմինների, կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների կողմից մեծ աշխատանք կատարվեց զինվորների ու հրամանատարների շրջանում, որպեսզի բարձրացվի նրանց քաղաքական-բարոյական, թշնամու ջախջախմանն ուղղված մարտական առաջադրանքների կատարման վիճակը:

Անցկացված միջոցառումների արդյունքում պլանավորվեց ռազմագործողությունը, զորքերը զբաղեցրին ելակետային դիրքերը Մաններհեյմի գծի ճեղքման նպատակով հարձակման անցնելու համար: Գլխավոր հարվածը Վիբորգի ուղղությամբ հասցրեց 7-րդ բանակը: Կեկսգոլսկի ուղղությամբ օժանդակ հարված հասցրեց 13-րդ բանակը Վ. Դ. Գրենդալի հրամանատարությամբ:

Հարձակումն սկսվեց 1940 թ. փետրվարի 11-ին: Հրետանին փակ կրակակետերից և ուղիղ նշանառության հրանոթներից ուժեղ հարված հասցրեց հակառակորդի ամրություններին և կենդանի ուժին: Դրան նպաստեց նաև ավիացիան:

Հրետանու և օդուժի համագործակցված հզոր հարվածից հետո զորքերն անցան վճռական գրոհի և փետրվարի 16-ին ճեղքեցին հակառակորդի գլխավոր պաշտպանական գիծը: Գրոհի հաջողության զարգացման նպատակով զորքերը համալրվեցին թարմ ուժերով ու միավորումներով, ինչպես նաև ուժեղ շարժական խմբերով: Ֆինները երերացին, բայց չդադարեցրին դիմադրությունը և նահանջելով պայքար սկսեցին յուրաքանչյուր ամրության ու կրակակետի համար: Նրանք գործում էին մանր խմբերով՝ հարվածներ հասցնելով խորհրդային հարձակվող ուժերի թիկունքից:

7-րդ բանակի՝ վիբորգյան ուղղությամբ գրոհող մասերն ու միավորումները սերտորեն համագործակցում էին բալթիական նավատորմի ռազմածովային ուժերի հետ: Մ. Բարսեղովի կողմից պլանավորված այդ համագործակցության էությունն այն էր, որ ստորջրյա և վերջրյա նավերը փակում էին ծովային հաղորդակցությունները, նավերը և առափնյա հրետանին կռիվ էր մղում հակառակորդի առափնյա մարտկոցների դեմ[22]:

Զորքի, հրետանու, բոլոր ուժերի և միջոցների սերտ համագործակցության և ակտիվ գործողությունների արդյունքում Մաններհեյմի գիծը վերջնականապես ճեղքվեց, 7-րդ բանակի զորքերը հաջողությամբ սկսեցին առաջխաղացումը Հելսինկիի ուղղությամբ ու գրավեցին Վիբորգը[23]: Նման պարագայում Ֆինլանդիան հարկադրված էր համաձայնելու խաղաղ պայմանների, և 1940 թ. մարտի 12–ին Մոսկվայում ստորագրվեց խաղաղության պայմանագիր՝ համաձայն որի՝ Կարելական պարանոցում սահմանագիծը տեղափոխվեց Վիբորգից և Կեկսհոլմից այն կողմ:

Խորհրդային երկիրը բարձր գնահատեց Կարմիր բանակի և նավատորմի հերոսական գործողությունները սպիտակ ֆինների դեմ կռիվներում: Ցամաքային զորքերի շուրջ 75 միավորումներ և զորամասեր, այդ թվում՝ հրետանային, ավիացիոն և նավատորմի, արժանացան Լենինի և Կարմիր դրոշի շքանշանների[24]: Դեռևս ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1940 թ. հունվարի 15-ի հրամանագրով դիվիրամ Միքայել Արտեմի Բարսեղովը պարգևատրվեց Լենինի շքանշանով[25]: Մարտերի 9 հա-

զարից ավելի մասնակիցներ պարգևատրվեցին խիզախության, արիության և հերոսության համար: 412 մարտիկներ արժանացան Խորհրդային միության հերոսի կոչման[26], որից 4-ը՝ հայեր[27]:

Սպիտակ ֆինների դեմ մարտերում Մ. Բարսեղովը բարդ և ծանր հանգամանքներում հմտորեն կազմակերպեց և ղեկավարեց 7-րդ բանակի հրետանու մարտական գործողությունները, որոնց ընթացքում ճիշտ պլանավորեց ու վարեց հրետանին, կիրառեց կրակապատնեշ, ծանր հրետանու ուղիղ նշանառության հրաձգություն հակառակորդի ամուր կառույցների դեմ, ճիշտ ղեկավարեց հրետանու գործողությունները զորամասերի ու զորամիավորումների մարտերի ընթացքում: Թշնամու ջախջախման ժամանակ ցուցաբերած արիության, վճռականության և հերոսության, հրետանին հմտորեն ղեկավարելու, հրամանատարության առաջադրանքը հմտորեն կատարելու համար 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով դիվիրամ Մ. Ա. Բարսեղովին շնորհվում է Սովետական միության հերոսի բարձր կոչում և «Ոսկե աստղ» շքանշան[28]:

Կուսակցության կենտկոմի 1940 թ. ապրիլի 14-17-ը տեղի ունեցած հատուկ պլենումը, քննարկելով Ֆինլանդիայի դեմ պատերազմի արդյունքներն ու դասերը, ինքնաքննադատական մոտեցում ցուցաբերեց խորհրդային զորքերի մարտական գործողությունների հանդեպ և նշեց միջոցներ՝ բացահայտված թերությունները վերացնելու համար: Պլենումը գլխավորում էր Ի. Վ. Ստալինը, ներկա էին խորհրդա-ֆիննական պատերազմի մասնակից նշանավոր հրամանատարներ, այդ թվում նաև Մ. Բարսեղովը[29]: Բացման խոսքով ելույթ ունեցավ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ Կ. Ե. Վորոշիլովը: Այնուհետ սկսեցին հանդես գալ հրամկազմի ներկայացուցիչները: Երկրորդը ելույթ ունեցավ կորպուսի հրամանատար, 7-րդ բանակի հրետանու պետ Մ. Ա. Բարսեղովը, որը բավականին համարձակորեն քննադատեց խորհրդային ուժերի բաց, թերի կողմերը:

Բարսեղովը նշեց, որ պատերազմում ամեն մի մետր հող գրավվել էր ծանր կռիվների և զոհերի գնով, որ 7-րդ բանակի ամեն մի զինվոր գիտակցում էր իր վրա դրված խնդիրը ու այն կատարում էր լավ՝ կռվելով հերոսաբար: Սակայն խորհրդային կողմը շատ քիչ տեղեկություններ ուներ ֆիննական պաշտպանական կառույցների մասին, ինչն էլ դժվարացրեց ու երկարաձգեց պատերազմի ընթացքը: Բարսեղովը քննադատեց հետախուզության ներկայացրած տվյալները, որի համաձայն՝ ֆիննական ամրությունների բետոնները կարող էին ոչնչացվել 152 մմ-ոց արկերով, բայց իրականում դրանք կատարվեցին 305 մմ-ով: Դա նշանակում էր, որ խաղաղ ժամանակ հետախույզները պետք է լրիվությամբ ուսումնասիրեին հակառակորդին:

Երկրորդ հարցը, որին անդրադարձավ Բարսեղովը, կադրային խնդիրն էր. «Մենք Ամերիկա չենք հայտնաբերում: Խաղաղ ժամանակ ինչ անում ենք կամ մինչև վերջ չենք անում, կամ էլ վատ ենք անում: Եթե զինվորը կապավոր է, ապա նրա տեղը կապն է, և առավոտից մինչև երեկո նա պետք է զբաղված լինի դրանով: Բայց ստացվում է, որ մենք ըստ հաստիքի ունենք 15 կապավոր, սակայն իրականում ինն են, ընդ որում՝ նրանցից վեցը գտնվում է ճաշարանում, իսկ մնացածները՝ չգիտես ուր: Դրան պետք է վերջ տալ, և գործերը կընթանան լավ, դա վերաբերում է նաև հրամկազմին»[30]:

Հաջորդ խնդիրը, որ արծարծեց Բարսեղովը, վերաբերում էր պահեստի հրամանատարներին, որոնք հիմնականում չեն գտնվում իրենց տեղերում և չեն վերապատրաստվում, և որ անհրաժեշտ է կատարելագործել ականանետները, թնդանոթները, արկերը՝ մեկառմեկ նշելով դրանց և՝դրական, և՝ բացասական կողմերը[31]:

Այնուհետ ելույթ ունեցան մնացած հրամանատարները. ուշագրավ է, որ բոլորն էլ իրենց խոսքում կարևորում էին հրետանու դերն ու գործունեությունը:7-րդ բանակի հրամանատար Կ. Ա. Մերեցկովը նույնպես իր ելույթում գովեց հրետանու կատարած գործողությունները և պատճառած վնասները, հատկապես հակառակորդի թիկունքա-

յին ուժերում[32]: Իսկ 7-րդ բանակի հրետանու պետը Բարսեղովն էր, ինչը նշանակում էր, որ էլ ավելի էր բարձրանում նրա հեղինակությունը:

Վերջում պլենումը եզրափակում է Ստալինը: Նա նույնպես իր ելույթում կարևորում է հրետանու, ավիացիայի, տանկերի դերը:

Դրանից հետո Բարսեղովը բազմիցս պատմում էր, թե ինչպես Ստալինի կողմից բարձր գնահատական էր տրվել խորհրդային հրետանու՝ «պատերազմի աստծո», ինչպես և կրակապատնեշի ու գրոհի դերին և նշանակությանը: Բացի այդ՝ նա նշել է, որ ժամանակակից պատերազմում հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ է հմտորեն օգտագործել ողջ ռազմական տեխնիկան[33]:

Ելնելով պլենումի որոշումներից՝ մշակվեց Կարմիր բանակի վերազինման և կազմակերպական վերակառուցման ընդարձակ ծրագիր: Սպիտակ ֆիններին դեմ պատերազմում մարտական մկրտություն ստացած բազմաթիվ հրամանատարներ առաջ քաշվեցին ղեկավար պաշտոնների: Մ. Բարսեղովը նույնպես առաջ քաշվեց և նշանակվեց Կարմիր բանակի հրետանու գեներալ-տեսուչ[34], իսկ ԽՍՀՄ ժողկոմխորհի 1940 թ. հունիսի 4-ի որոշմամբ նրան շնորհվեց հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում[35]: Մ. Բարսեղովը գեներալ-տեսուչի պաշտոնում մնում է մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրահանգման, որ խորհրդա-ֆիննական պատերազմին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև հայ ժողովրդի զավակները, որոնցից չորսը արժանացել են հերոսի բարձր կոչման: Նրանցից մեկն էլ Մ. Ա. Բարսեղովն էր, ով ծնվել էր Արցախի լեռնային գյուղերից մեկում՝ Կոլխոզաշենում: Անցնելով Առաջին աշխարհամարտի, քաղաքացիական կռիվների միջով՝ նա եղավ առաջին արցախցին, ով արժանացավ ԽՍՀՄ հերոսի կոչման:

Հայ ժողովուրդը իրավամբ պետք է հպարտանա Մ. Բարսեղովի նման քաջորդիներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱԱ, ֆ. 688, g. 5, գ. 33, թ. 1:
2. Հայազն Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Երևան, 2009, էջ 386:
3. Вирабян А., Знаменитые арцахцы, Арцах (Карабах), Утик, книга первая, Ереван, 1992, ст. 57.
4. ՀԱԱ, ֆ. 688, g. 5, գ. 33, թ. 10:
5. Ռ. Հ., Հրետանու գեներալ-գնդապետ Միխայիլ Պարսեղով: «Մշակույթ», 2013, մայիս-հունիս, էջ 11:
6. Բաղդասարյան Ա., Նրա ամբողջ կյանքն ընդօրինակման նմուշ է, «Ազատ Արցախ», 1999, 14 հոկտեմբերի, էջ 3:
7. Հայրապետյան Հ., Միքայել Բարսեղովի չորս պատերազմը, «Սովետական Հայաստան», Երևան, 1985, թ. 5, էջ 16:
8. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания посовместной с ним работе и учебе), М., 1970, стр. 3.
9. Арутюнян К., Участие воинов-армян Нагорного Карабаха и Севернего Арцаха в Великой Отечественной войне Советского Союза(1941-1945), Ереван, 2009, стр. 94.
10. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
11. Ղազարյան Ա., Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, հ. 1, Երևան, 1975, էջ 47:
12. ՀԱԱ, ֆ. 688, g. 5, գ. 33, թ. 13:

13. ՌՊՌԱ, ֆ. 37977, g. 1, գ. 232, թ. 1-4, 14-15:
14. Հարությունյան Կ., Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմին (30. 11. 1939-13. 03. 1940), Երևան, 2008, էջ 20:
15. «Խիզախներ» ժողովածու, Երևան, 1942, էջ 14-15:
16. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ: Տե՛ս նաև Մկրտչյան Շ., Ականավոր զորահրամանատարը, «Սովետական Ղարաբաղ», 1969, 15 հուլիսի:
17. Մալխասյան Ա., Սովետական բանակի հայ գործիչները, Երևան, 1963, էջ 233-234:
18. ՀԱԱ, ֆ. 688, g. 5, գ. 33, թ 23: Տե՛ս նաև Մալխասյան Ա., Սովետական բանակի հայ գործիչները, երկրորդ լրացված հրատարակություն, Երևան, 1965, էջ 284-289:
19. Մերեցկով Կ. Ա., Ծառայություն ժողովրդին, Երևան, 1971, էջ 248:
20. Նույն տեղում, էջ 249:
21. Багдасарян А., Вся жизнь его была образцом для подражения, Азат Арцах, 1999 г., 23 октября, стр. 6.
22. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания посовместной с ним работе и учебе), М., 1970, стр. 8.
23. Մերեցկով Կ. Ա., Ծառայություն ժողովրդին, էջ 251:
24. Бои на Карелском перешейке, М., 1941, стр. 411-415.
25. Հարությունյան Կ., Հայ ռազմիկների մասնակցությունը խորհրդա-ֆիննական պատերազմին (30. 11. 1939-13. 03. 1940), էջ 49: Տե՛ս նաև Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
26. Գասպարյան Վ., Խորհրդա-ֆիննական պատերազմին (30. 11. 1939-13. 03. 1940) հայերի մասնակցության հիմնահարցի ուսումնասիրությունը հայ պատմագրության մեջ, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հուլիս-դեկտեմբեր, 2016, 3-4, էջ 74:
27. Հարությունյան Կ., նշվ. աշխ., էջ 39: Տե՛ս նաև Книга о героях, Ереван, 1985, ст. 9-16, Գիրք հերոսների մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, էջ 28-32:
28. Podvignaroda.ru, ЦАМО, ф. 33, оп. 793756, ед. хр. 36, л. 331(198). Տե՛ս նաև Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ: ՀԱԱ, ֆ. 688, g. 4, գ. 106, թ. 31:
29. Кульков Е., Ржешевский О., Зимняя война 1939-1940. И. В. Сталин и финская кампания. (Стенограмма совещания при ЦК ВКП(б)), М., 1999, стр. 2-5:
30. Ржешевский О., Вехвиляйнен О., Зимняя война. 1939-1940. Книга вторая. Политическая история. И. В. Сталин и финская кампания, М., 1999, стр. 13.
31. Նույն տեղում, էջ 13-15:
32. Кульков Е., Ржешевский О., Зимняя война 1939-1940, стр. 44-46:
33. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания посовместной с ним работе и учебе), стр. 9-10:
34. Հրետանու գեներալ-գնդապետը, «Սովետական Ղարաբաղ», 1975, մարտի 13: Տե՛ս նաև Книга о героях, Ереван, 1985, стр. 9-16.
35. ՀԱԱ, ֆ. 688, g. 4, գ. 106, թ. 31: Տե՛ս նաև Արտյոնյան Կ., Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван, 2009, стр. 95. Газ. «Известия», 6 июня 1940, № 129, стр. 1.

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Մ. Ա. Բարսեղովի դերը խորհրդա-ֆիննական պատերազմում
Պատմական գիտությունների թեկնածու Վրեժ Հարությունյան
Վրեժ Հարությունյան

1939 թ. նոյեմբերից մինչև 1940 թ. մարտը տեղի ունեցավ խորհրդա-ֆիննական պատերազմը, որին մասնակցեցին մեծ թվով հայեր: Նրանցից չորս հոգի արժանացան հերոսի բարձրագույն կոչման: Առաջին արցախցին, ում 1940 թ. մարտի 21-ի հրամանագրով հերոսի կոչում շնորհվեց, վիբորգյան ուղղությամբ գործող 7-րդ բանակի հրետանու պետ Միքայել Արտեմի Բարսեղովն էր: Նա պարգևատրվեց «Ոսկե աստղ» շքանշանով: Սպիտակ ֆիններ դեմ մարտերում Մ. Բարսեղովը բարդ և ծանր հանգամանքներում հմտորեն կազմակերպեց և ղեկավարեց 7-րդ բանակի հրետանու մարտական գործողությունները, որոնց ընթացքում ճիշտ պլանավորեց ու վարեց հրետանին, ճիշտ ղեկավարեց հրետանու գործողությունները զորամասերի ու զորամիավորումների մարտերի ընթացքում: Մեծ էր Բարսեղովի դերը թշնամու ջախջախման, հրամանատարության առաջադրանքը հմտորեն կատարելու գործում:

РЕЗЮМЕ
Роль М.А. Барсегова в советско-финской войне
Вреж Арутюнян

Ключевые слова: М. А. Барсегов, Арцах, артиллерия, белофинны, 7-ая армия, война, Маннергейм, генерал-лейтенант, герой СССР.

В советско-финской войне с ноября 1939 года до марта 1940 года принимало участие большое количество армян. Четверо из них были удостоены звания героя. Первым арцахцем, которому 21-го марта 1940 года было присвоено звание героя, был начальник артиллерии действующей 7-ой армии Михаил Артемович Барсегов. Он был также награжден орденом "Красной звезды". В борьбе с финнами-белогвардейцами в сложных и тяжелых условиях М. Барсегов умело организовывал и управлял действия артиллерии 7-ой армии. Велика роль Барсегова в разгроме противника, в исполнении заданий командования.

SUMMARY
On the Role of M.A Barsegov in Soviet-Finnish War
Vrezh Harutyunyan

Keywords: M. A. Barsegov, Artsakh, artillery, white Finns, the 7th army, war, Mannerheim, general-lieutenant, the USSR hero.

A great number of Armenians participated in the Soviet-Finnish war which took place in November 1939 - March 1940. Four of them were awarded the highest title of the hero. The first Artsakhi awarded the title of the hero on March 21, 1940 was Michael Barsegov - the 7th Army Artillery Chief in Viborg. He was awarded the «Golden star» order. In the battle with "white" Finnish he skillfully organized the 7th Army Artillery's combat operations in complicated and hard circumstances; he planned and supervised artillery operations during battles. Barsegov's role was great in the defeat of the enemy and skillful execution of the command task.